

1.2.2. Գյուղատնտեսություն

Գյուղատնտեսության համախառն արտադրանքը 2003թ. հունվար-նոյեմբերին, ընթացիկ գներով, բոլոր գյուղական համայնքներից և գյուղատնտեսությամբ զբաղվող առևտրային կազմակերպություններից ստացված վիճակագրական հաշվետվությունների, ինչպես նաև գյուղատնտեսության վիճակագրական ընտրանքային դիտարկման ցանցում ընդգրկված 7600 գյուղացիական տնտեսություններից ստացված հարցաթերթերի նախնական տվյալներով, կազմել է 338.1 մլրդ.դրամ, որը 2002թ. մակարդակը գերազանցել է 2.2%-ով: 2003թ. նոյեմբերի համախառն արտադրանքը, համադրելի գներով, կազմել է հոկտեմբերի 51.5%-ը:

Հանրապետությունում ավարտվել են գյուղատնտեսական մշակաբույսերի բերքահավաքի և աշնանացանի աշխատանքները: Նախնական տվյալներով, 01.12.2003թ. դրությամբ գյուղատնտեսական հիմնական մշակաբույսերի համախառն բերքը բացի հացահատիկից և խաղողից, գերազանցել է նախորդ տարվա մակարդակը: 2003թ. դեկտեմբերի 1-ի դրությամբ հանրապետությունում կատարվել է 109012 հեկտար աշնանացան մշակաբույսերի ցանք 2002թ. նույն ժամանակաշրջանի 107173 հեկտարի դիմաց կամ 1839 հեկտարով ավել:

Կատարվել է աշնանացան հանրապետությունում, մարզերի կտրվածքով, 2003թ. դեկտեմբերի 1-ի դրությամբ

(հեկտար)

	2003թ.	2003թ. 2002թ. նկատմամբ, %
ք.երևան	210	84.0
Արագածոտն	8724	129.6
Արարատ	9940	112.4
Արմավիր	15000	120.4
Գեղարքունիք	11343	82.1
Լոռի	9675	84.2
Կոտայք	9130	112.4
Շիրակ	23000	115.6
Սյունիք	13355	89.0
Վայոց ձոր	1777	81.2
Տավուշ	6858	82.3
Ընդամենը ՀՀ	109012	101.7

ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունը 2003թ. հուլիս-սեպտեմբերին գյուղատնտեսության ընտրանքային դիտարկման ցանցում ընդգրկված 200 գյուղական համայնքների 7600 գյուղացիական տնտեսություններում անց է կացրել հացահատիկային մշակաբույսերի բերքահավաքի որակի հետազոտություն: Հետազոտված տնտեսություններում բերքահավաքի ընթացքում հացահատիկային մշակաբույսերի ցանքատարածություններից կորուստները մեկ հեկտարից կազմել են 129 կգ, որը տվյալ տնտեսություններում ստացված հացահատիկային մշակաբույսերի միջին բերքատվության 11.0 %-ը:

Ըստ հետազոտության ամփոփ արդյունքների հանրապետությունում հացահատիկային մշակաբույսերի բերքահավաքի ընթացքում կորուստները կազմել են մոտ 24.0 հազ. տոննա կամ ընթացիկ տարում արտադրված հացահատիկային մշակաբույսերի համախառն բերքի 7.8%-ը: Արձանագրված կորուստների զգալի մասը, ինչպես նախորդ տարիներին, հիմնականում տեղի է ունեցել հացահատիկահավաք կոմբայների ֆիզիկական մաշվածության պատճառով:

**Անասնաբուժական մթերքի արտադրությունը հանրապետությունում,
մարզերի կտրվածքով, 2003թ. դեկտեմբերի 1-ի դրությամբ**

(հաշվարկային տվյալներ)

	Իրացվել է անասուն և թռչուն սպանդի համար (կենդանի քաշով) ¹ , հազ. տոննա		Արտադրվել է կաթ, հազ. տոննա		Արտադրվել է ձու, մլն. հատ	
	2003թ.	2003թ. 2002թ. նկատմամբ, %	2003թ.	2003թ. 2002թ. նկատմամբ, %	2003թ.	2003թ. 2002թ. նկատմամբ, %
ք. Երևան	0.5	100.7	3.3	106.5	54.6	115.9
Արագածոտն	8.2	103.8	58.2	109.6	24.8	117.5
Արարատ	6.8	100.0	37.7	103.0	36.0	120.8
Արմավիր	7.9	111.3	32.5	108.3	35.0	115.9
Գեղարքունիք	12.3	101.7	89.5	103.7	34.5	119.4
Լոռի	7.7	106.9	59.2	113.0	20.6	128.0
Կոտայք	7.8	111.4	51.2	109.2	179.6	92.0
Շիրակ	10.5	102.9	75.1	107.6	33.1	107.8
Սյունիք	5.9	105.4	42.5	105.7	14.2	111.8
Վայոց ձոր	2.8	100.0	19.0	104.4	10.7	112.6
Տավուշ	6.0	101.7	34.5	102.4	21.6	98.2
Ընդամենը ՀՀ	76.4	102.6	502.7	106.9	464.7	104.8

2003թ. հունվար-նոյեմբերին անասնի և թռչնի իրացումը գերազանցել է 2002թ. ցուցանիշը 1.9 հազ. տոննայով կամ 2.6%-ով, կաթի արտադրությունը՝ 32.4 հազ. տոննայով կամ 6.9%-ով, ձվինը՝ 21.4 մլն. հատով կամ 4.8%-ով:

¹ Ներառյալ ներքին սպառումը:

«Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2003թ. հունվար-նոյեմբերին»